

Այս կերպ գրած վերնագիրները շեշտելով էականը արձաճ են մեծ չեն կարող գուրս գալ, երբ ասելի որոշ, կարճ և բուն խնդրին վերաբերեալ գրած կը լինի իւրաքանչիւր հաստատած. օրինակ՝ «մինչև բժշկի գալը հիւանդին օգնութիւն տալու եղանակները» հաստատում չը պէտք է լինէր թէ հիւանդի առողջ անալու ժամանակ ինչ օգտակար կը լինի, մինչև բուժութիւն առողջ անալը ինչ դիէտա պիտի պահի, կամ եթէ հիւանդը մեռնում է, դիակի հետ ինչ անել և ալն (տես եր. 25): Հաս-

կանալի է, որ այս ամենը շատ լաւ խորհուրդներ են, սակայն կապ չ'ունին «մինչև բժշկի գալը» տալիք օգնութեան հետ: Մի խօսքով բոլոր գրածքի ձևը և շինածքը ուրիշ կը լինէին, եթէ գլխաւորապէս երկրորդ տեսակի ընթերցողներին ի նկատի ունենալին այս օգտակար գրքովի հրատարակիչները: Այնու ամենաւել յերկայումս «Խօսերա» բրոշիւրը շատ ժամանակին է գուրս գալիս և ցանկալի է նորա լայն տարածումը մեր երկրի ամեն անկիւններում:

Լ. Ս.

ԲՕԴԵՆՇՏԵԴՑ, Ֆրիդրիխ, Փօն—«ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՄ ԿԵԱՆՔԻՑ».
I և II հատոր: Հրատարակութիւն «Դերմանական գրականութեան
ընդհանուր ընկերութեան». Բերլին. 1890 թ.

Հայ ընթերցող հասարակութեանը ոչ մի այժմուս գերմանացի նշանաւոր գրականագէտի անուն արժան ծանօթ չէ, որքան Ֆրիդրիխ Փօն Բօդենշտեդտինը: Հայկական աշխարհի հետ նա մի քանի իւր համար նշանաւոր ընդհանրով է կապւած: Դեռ ևս երիտասարդ, 40 թւականներում նա այցելեց Կովկասը, գնաց Սրբան, Էջմիածին: Նա մեծ տպաւորութիւններով վերադարձաւ մեր երկրից, և ալիք տպաւորութիւնները, որպէս մենք ալիք դիտեցք անձնական ծանօթութիւնից, վառ են նորա մէջ ալիք, որպէս ասելի քան քառասուն տարի առաջ: Կովկասում նա ծանօթացաւ Միրզա Շաֆֆիի հետ, որի անունով նա դրեց արեւելեան ճաշա-

կով ալն սքանչելի բանաստեղծութիւնները, որոնք լատինի են նաև շատ հեռու շրջաններում: Իւր ճանապարհորդական մի քանի տպաւորութիւնները նա դրեց «Ճանապարհորդութիւն դէպի Հայաստան» վերնագրով, որ նաև «Մուրճ»-ի ընթերցողներին իւր լուսածնով լատինի դօքտ. Յովհաննէս Բարխուդարեանց թարգմանօրէն տպել է «Հանդէս Գրականական և Պատմական» Մօսկաւի կիսամեա հանդիսի երկրորդ գրքում (1889 թ.): Բօդենշտեդտը լատինի է մեզ, վերջապէս, իւր գրախօսական նկատողութիւններով պ. Աբգ. Յովհաննիսեանի հրատարակած «Հայկական Դրադարանի» գերմաներէն գրքերի մասին: Ահլքանը, ինչ ուզ-

դակի մեզ է վերաբերում. բայց Բողենշտեդտը առհասարակ ալֆմեան նշանաւոր գրական անձերից մէկն է Գերմանիայում, չալտնի իւր բազմակողմանի գրական գործունէութիւնով, մանաւանդ իբր բանաստեղծ. իւր եթէ մէկը ձեռնարկում է իւր «վիշողութիւնները» գրել և հաւատացած լինել, որ նորան ազահուլթեամբ կը կարգան ընդհանրապէս բոլոր գրագէտ մարդիկ, — դորա համար պէտք է որ մարդս վաւելէ բաւականին մեծ ժողովրդականութիւն. իւր Բողենշտեդտը ալ ժողովրդականութիւնը վաւելում է:

Յիւ. ֆօն Բողենշտեդտը իւր վիշողութիւնները հասցրել է ալֆմ մինչ 1850 թւականը: Առաջին հատորում, որը գրւած է արտասովոր հետաքրքրական կերպով, նա նկարագրում է իւր երիտասարդութիւնը և իւր երկարամեայ բնակութիւնը Ռուսիայում, որպէս նաև իւր ճանապարհորդութիւնը Կովկասի վերալով Կ. Պօլիս և ալլն. Ալֆմ նա, երկրորդ հատորում, խօսում է 1846—1850 թ. աւանների մասին, ալլինքն սկսած նորա հաստատելուց Միւնխէնում, մինչ իւր երիտասարդութեան վերջը: Միւնխէնի ժամանակից նա առաջ է բերում մի շարք հռչակաւոր մարդիկ, և չնայ մի ճանապարհորդութիւն Շւէյցարիայում, ուր մեծ տուգումն էր տիրապետում՝ կանտոնական պատերազմի պատճառով, և վերջապէս ուղևորութիւն Իտալիա՝ Միլան, Տուրին, Ֆլորենց, Հռոմ, Տրիեստ և վերադարձ Գերմանիա:

Այդ ժամանակ լոյս տեսան նորա երկը Կովկասի ազգերի մասին, որի

համար նա Հռոմում ի զուր 4000 Ֆրանկ էր սպասում իւր հրատարակչից, որը ալ ժամանակ սնանկացաւ. և Ամերիկա փախաւ: Ալլալիսով Բողենշտեդտը իրան խաբւած տեսաւ իւր երեք տարւալ աշխատութիւնների պալմանաւորւած վարձատրութեան համար: Ապա Բողենշտեդտը ընդունեց պր. ֆօն Բրուկի'ից նրան առաջարկւած Տրիեստի «Աւստրիական Լիւդի լրագրի» խմբագրութիւնը, որը նա երեք ամսից չնայ վլէննա տեղափոխեց, Ալլտեդ նա ականատես եղաւ 1848 թ. հոկտեմբերեան լեղափոխութեան, Լրագրի խմբագրութիւնը թողնելով, նա անցաւ Բերլին, որտեղից նա 1849-ին, իւր ներկայացուցիչ Բերլինի և ալլ քաղաքների, ուղարկեց Պարիզ, ուր դումարւած էր «Ազատաւաճառների կոնգրեսը», որին բոլոր լուսաւորեալ երկիրները մասնակցեցին: Պարիզեան նշանաւոր դէպքերի նկարագրութիւնով կը սկսւի Բողենշտեդտի «վիշողութիւնները» երրորդ հատորը:

Այստեղ մենք կը հաղորդենք երկրորդ հատորից մի քանի հետաքրքրական և ուսանելի կտորներ Միւնխէնում եղած ժամանակից, Ալլտեդ նա, իւր աշխատութիւնների համար, օգտեց պատական արեւելագէտ պրօֆ. Միւլլերի'ից և մեծ լեզուաբան ֆօն Թիւրշի'ից: Միւլլերը նորան օգնեց զտել արեւելեան դժուարին ձեռագրերը, որ Բողենշտեդտը մեծ քանակութեամբ իւր հետն էր բերած: Միւլլերը ալլքան լաւ չէր ծանօթ թաթարերէնի հետ, որքան արաբերէնի և պարսկերէնի հետ. ալլտեդ նրան օգնեց պրօֆ. Ֆալմերայէր, որը իւր երկարամեայ

կնցութեամբ արևելքում՝ մեծ և ուսն-
դով լեզուաբանական ուսումնասի-
րութիւններ էր արած: Ֆալլմերալէր
արդէն մեծ անուն էր ստացել իւր
երկրորդ «Պատմութիւն Մօրէակի» և
«Պատմութիւն Տրապիզոնտի կայսե-
րութեան», երկեր, որոնք վկայում
էին հեղինակի ընդարձակ գիտու-
թիւնը: Բայց հռչակաւոր դառաւ նա
միայն, երբ գրքի ձևով հրատարակեց
«Ֆրագմենտներ Արևելքից»։ Կղ-
այիսի հռչակ չէր ստացած աչն ժա-
մանակ ոչ ոք Միւնխենի գրողներից:
Այդ հռչակին շատ նպաստեց աչն
հանգամանքը, որ Ֆալլմերալէր իւր
«Ֆրագմենտները», իւր երկարամեայ
ճանապարհորդութեան միջոցին, Թիւր-
քիայում և Յունաստանում, հրատա-
րակեց Աուգսբուրգի «Ալլգեմայնէ
Յայտունգ» լրագրում և այդտեղ աչն-
պիսի. թեզիսներ պաշտպանեց, որոնք
մեծ վրդովմունք գցեցին գիտնական-
ներին շրջանում և որոնք խիստ չար-
ձակումների տեղիք տւեցին: Բայց
Ֆրագմենտիստը, բանակուի մէջ, իւր
բոլոր հակառակորդներին իրան գե-
րազանց ցոյց տւեց: Իւր «Մօրէակի
պատմութեան» մէջ, դեռ նա ալս
թեզիսը դրեց և ապա աշխատեց հիմ-
նաւորապէս ապացուցել, թէ ալժմեան
յուները իբր թէ հին յուների հետա-
գաները չեն, ալ մոսկովցիներին ա-
րիւնով ազգական՝ բայց գոյնը փո-
խած սլաւոնացիք, որոնց վալրենի
հրոսակները աւելի քան հազար տա-
րի առաջ իբր թէ Պելոպոնէզը ամա-
լադրած և ալդ երկրի հին բնակիչ-
ներին վռնած լինէին: Բնական է,
որ Բաւարիայի թագաւոր Լուդովի-
կոս I, որը բոլոր Ֆրիսլանդներին

ամենաողնորածն էր և հալր Յու-
նաստանի թագաւոր Օտտօի, Ֆալմե-
րալէրին ծուռ աչքով էր նայում: Այդ
չը խանգարեց, որ Բաւարիայի թա-
գաժառանգ Մաքսիմիլիանը Ֆալ-
մերալէրին իւր հետ բարեկամացնի:
Բողենշտեդտը ալդ ժամանակ ոչ մի
լարաբերութիւն չ'ունէր թագաժա-
ռանգի հետ, ալ ծանօթացաւ նորա
հետ վեց տարի լետով, երբ նա թա-
գաւոր էր, երբ սա հրաւիրեց Բողենշ-
տեդտին Միւնխէն: Առիթը տւեցին
Բողենշտեդտի ալդ միջոցին դուրս
եկած «Կովկասի ազդեր» վերնագրով
գրքերը, որոնցից մէկը հռչակաւոր
Ֆրագմենտիստ Ֆալլմերալէրին էր
նւիրած, մի հանգամանք, որը բնա-
կանապէս թագաւորի ուշադրութիւնը
գրաւեց և բաղմիցս իւր վերայ էր
դարձնում խօսակցութիւնը: Յետոյ
Բողենշտեդտը իմացաւ, որ Ֆալլմե-
րալէրը անձնական լարաբերութիւնով
թագաւորի վերայ ուրիշ աւե-
լի աննպաստ տպաւորութիւն է ա-
րել, քան երբ նա նորան ճանաչում
էր նորա գրածներով:

Աուգսբուրգում Բողենշտեդտը ծա-
նօթացաւ երևելի քաղաքատնտես
Ֆրիդրիխ Լիստի հետ, որը նորա-
նից լետ շուտով Միւնխէն գնաց: Այդ
ժամանակ Լիստը Գերմանիայի առա-
ջին հռչակներից մէկն էր: Պատահեց,
որ Բողենշտեդտ և Լիստը մի տան
մէջ բնակարան վարձեցին, անգամ
իրանց ճաշը միասին էին անում,
քանի որ Լիստը իւր ընտանիքը Աուգս-
բուրգում էր թողած: Ճաշից լետ
գնում էին զբօսնելու, բայց ոչ շատ
հեռու, որովհետև Լիստը թէ գէր էր
և թէ սովորութիւն ունէր կանգնել,

երբ մի հետաքրքրական առարկա էր տեսնում, իւր նկատողութիւնները անելու համար. և երբ խօսքը ծիծաղելի բանի մասին էր, աչնպէս սրտանց ծիծաղել գիտէր, որ փողոցով անցնողները ստիպւած էին զարմացմամբ նայել նորա վերայ: Առաջին ալցելութիւնը, որի համար Բողենշտեղտը Լիստին պէտք է ուղեկցէր, երկուսին տարաւ աչն ժամանակաւ մինիստր իշխան Բէտտինգեր-Վալլերշտաճնի մօտ, որից Բողենշտեղտը մի չափազանց հետաքրքրական քաղաքներինստիկ է տալիս:

Իւր «Կովկասի ազդեր» երկը օրեկան չորս ժամ էր խլում, բայց եւսնպէս Բողենշտեղտը առիթներ չատ ունէր ծանօթութիւնների համար: Այդպիսիներիցն էին ղինւորական կոմս Մաքս Բօթմեր և լետովալ գններալ Փօն Պասաւանտ: Երկուսն էլ իրանց կենդանութեան օրօք մինչ վերջ մնացին բանաստեղծի լաւագոյն բարեկամներ: Բարեկամութիւնը հէնց սկզբից մեծ դեր է խաղացել Բողենշտեղտի կեանքում: Մի քանի տարի առաջ ջրում խեղդւած Բաւարիայի անբաղդ թագաւոր Լուդովիկ II-ի գրասեղանի վերը կախւած գտան խնամքով շրջանակած և թագաւորի սեպհական ձեռքով գրած ու ստորագրած մի ոտանաւոր, որ մենք տալիս ենք աչստեղ թարգմանաբար, առանց հետեւելու ընագրի ոտ ու չափին.

«Ներք մէկը բարեկամիդ վրայ խօսում է վատ,
Նորանից զգուշ կաց՝ մի ընծալիր հաւատ.

Թէ որ ողջ աշխարհ բարեկամիդ վատաբանէ՝

Աշխարհքին մի հաւատալ, բարեկամիդ նալէ:

Միայն ով աչսպէս ամուր բարեկամներին սիրէ՝

Արժանի է, որ երկինք բարեկամներ պարգևէ:

Բարեկամ մարդու սիրտը աչն քան մեծ գանձ է,

Որ ամբողջ աշխարհք նորա տեղը չի տալ.

Դա մի գոհարեղէն է սրբազան հրաշքի ուժով,

Որ հրաշքներ է գործում միայն պինդ հաւատով.—

Բայց ամեն մի կասկածով նորա փալը կը պղտորէր,

Եւ թէ որ մի գամ կոտրւեց—ամբողջ չի դառնալ երբէր:

Ահա ինչու, երբ աչդպիսին մէկը ունենաս,

Նորա փալը մի պղտորիր, գին տուր անպակաս,

Նորան մի կոտրիլ՝ Աշխարհքը ընդունիր

Իբր շրջանակ, որ ալդ գոհարը պահում է,

Եւ որին արժէք է տալիս ինքը ալդ գոհարը:

Եւ ուր նա չը կալ—պղծւած է աշխարհը:

Բայց թէ լինես չքաւոր, մուրացկան անգամ,

Դու հարուստ ես, եթէ ունիս բարեկամ,

Եւ արքայի թէ ձեռք էլ բերես դահլը,

Բայց ոչ մի բարեկամ՝ դուն ևս մեծ թշաւորու

Կարծում էին, թէ դորա հեղի-նակը Լուդովիկ II-ն է. բայց դա՝

Բողենշտեդտինն է, դրած և հրատարակած դեռ ալն ժամանակ, երբ հանգուցեալ անբաղդ թագաւորը փոքրիկ պրինց էր:

Ճաշից լետոնները Բողենշտեդտը մի քանի ժամանակ շարունակ լսում էր ծերունի Գօրրէս-ի դասախօսութիւնները հին գերմանական կալսեթեան պատմութեան մասին. երկուցները, եթէ թատրոն չէր գնում, անց էր կացնում բարեկամների շրջանում, որոնց թւում, բացի վերոյիշեալներից, կալին նաև լանդշաֆտների մեծ նկարիչ Կարլ Ռօտման և երկու հռչակաւոր բոտանիկոսներ՝ ֆոն Մարցիոլս և ֆոն Լեդէբուր: Մարցիոլս մանաւանդ սիրում էր պատմել իւր խօսակցութիւններից Գեօթէի հետ, որը նորան, իբր երիտասարդ և իւր ճանապարհորդութիւնով Բրազիլիայում (1817—20) շատ շուտ հռչակած գիտնականին իւր մօտ՝ Վէլմար էր հրաւիրել, և լետոլ նամակագրութիւնով մօտ լարաբերութիւններ էր պահպանել:

Բաւարիայի առաջին թագաւոր Մաքսիմիլիան Յովսէփի ժամանակ (Բաւարիայի պետը թագաւորի տիտղոս ստացաւ միայն Նապօլէօն I-ի ժամանակ), որը գիտութիւնների եռանդոտ նպաստող էր,—կաղմեց Բրազիլիա ուղարկելու համար մի բնագիտական էքսպեդիցիա, ղեկավարութեամբ Մարցիոլս և Սպիքս պրօֆէսորների, 100.000 գուլդէն նշանակեց ալդէքսպեդիցիայի համար: Երբ թագաւոր դառաւ Լուդովիկոս I, սա չ'ուղեց ալդէ մասին խօսք անգամ լսել և չ'ուղեց տալ գումարը: Մարցիոլս և Սպիքս դանգատ տւին

պետութեան գանձարանի ղէմ, և դատը տարան, որի պատճառով թագաւորը որ միմիայն զնգարւեստով էր ոգևորւած, նոցա վերալ սկսեց անողորմած կերպով նալել, ալնպէս որ երբ նոցանից մէկին տեսնում էր, միշտ շփոթւում էր, ընդունելով նորան միւսի տեղ: Թագաւորը, հանդիպելով Մարցիոլսին, ասում էր՝ «Բնչպէս էք, սիրելի Սպիքս, և ինչ է շինում Մարցիոլսը, ալդ վիմարը, որը ինձ ալքան փող նստեց իւր բթազիլիական դարմանի համար, որով ես մի նոր եկեղեցի կարող էի շինել»: Եւ երբ թագաւորին հանդիպում էր անբաղդ Սպիքսը, նա ասում էր սորան՝ «Բնչպէս էք, սիրելի Մարցիոլս, և ինչ է շինում Սպիքսը, ալդ վիմարը, որը նոյնպէս մի բնագէտի տեղ է դնում իրան»: Եւ պատասխանի չը սպասելով՝ իսկոյն հեռանում էր թագաւորը:

Շատ ծիծաղալի է նաև ալս փոքրիկ պատմութիւնը, որ Բողենշտեդտի բարեկամները՝ Նէուրէութէր և Ֆօրստէր ունեցան թագաւորի հետ:

Էրնստ Ֆօրստէր աստուածաբանութեան և ֆիլոսօֆալութեան ուսանողից դառել էր մի նկարիչ և աշակերտ Կօրնէլիոսի, որին նա ուղեկցեց Միւնխէն, ուր նա սորա հետ աշխատակցեց Գլիպտօթէկի և Արկադների որմանկարների վերալ, իսկ ապա նաև թագաւորական պալատի պատինկարների վերալ հանձարեղ Նէուրէութէրի հետ, որը չանձն էր առել թագուհու սալօնը նկարել տեսարաններով Վիլանդի Օբերոնից:

Ճաշից առաջ մի անգամ գալիս

է թագաւորը գործերի դրութիւնը տեսնելու համար:

«Բարի լուս, սիրելի Ֆորստէր».— Սա խոնարհաբար գլուխ է տալիս: «Բայց ուր է Նէուրէնլթէր, ես նորան չեմ տեսնում»:

«Մեծութիւն, Նէուրէնլթէր միշտ ժամը 12-ին գնում է ճաշելու և գալիս է ժամը 1-ին: Յետոյ ես եմ գնում ճաշելու»:

Այդ միջոցին թագաւորը արդէն ղենաբար նայած էր նկարները, իբր թէ նորա խօսքերին ուշք չը դարձնելով, և իւր բաականութիւնն է լայտնում, ասելով՝ «Գեղեցիկ է, շատ գեղեցիկ: Բայց հրէն ալն տաճիկը շատ է հաստ: Այդքան հաստ տաճիկ չի սագում թագուհու սալօնի համար: Ասացէք ալդ Նէուրէնլթէրին: Մնաք բարեաւ»:

Ֆորստէրը ճիշդ կատարում է լանձնարարութիւնը: Նէուրէնլթէրը չի գտնում, թէ տաճիկը շատ լինի հաստ նկարած, բայց պէտք է հպատակէր և վճռէր մի աւելի բարակ տաճիկ նկարելու:

Մի չաբաթ անց կրկին գալիս է թագաւորը և նոյն ժամին ինչպէս առաջին անգամ:

—«Բարի լուս, սիրելի Ֆորստէր: Ո՛ւր է Նէուրէնլթէրը, ես նորան չեմ տեսնում:

«Մեծութիւն, Նէուրէնլթէրը միշտ ժամը 12-ին գնում է ճաշելու և գալիս է ժամը 1-ին: Յետոյ ես եմ գնում ճաշելու»:

Այդ միջոցին թագաւորը արդէն ղենաբար նայած էր նկարները: «Գեղեցիկ է, շատ գեղեցիկ, բայց ալն տաճիկը շատ է հաստ, Նէուրէնլթէրը

ալդ պէտք է փոփոխէ: Մի ալդպիսի հաստ տաճիկ չի սագում թագուհու սալօնի համար: Ես ձեզ արդէն մի անգամ ասացի»:

«Մեծութիւն, ես ալդ իսկոյն նրան հաղորդեցի և նա շտապեց տաճիկին որքան կարելի է բարակացնել»:

«Ես ձեզ ասում եմ, տաճիկը շատ է հաստ», կրկնում է թագաւորը դուրս գնալիս: Նէուրէնլթէրը իւր վերադարձին իմանում է, որ տաճիկը դեռ ևս շատ է հաստ և վճռում է տաճիկին բոլորովին ջնջել և նորա տեղը մի սիրուն արար մանկլաւիկ է նկարում: Մի քանի շաբաթից չետոյ կրկին գալիս է թագաւորը նոյն ժամին և անում է նախ հարցը խեղճ Նէուրէնլթէրի մասին, որին նա երբէք գործի վերայ չի գտնում: Թագաւորը իւր ուրախութիւնն է լայտնում գործի առաջագիմութեան համար, բայց գտնում է, որ տաճիկը դեռ ևս շատ է հաստ: Ի գուր Ֆորստէրը աշխատում է ուշք դարձնել, որ տաճիկը ալ ևս չը կալ և որ նորա տեղը արար մանկլաւիկ է նկարած: Թագաւորը, իբր ոչինչ չը լսած, թողնում է թագուհու սալօնը ալս խօսքերով՝ «Տաճիկը շատ է հաստ, ասացէք ալդ Նէուրէնլթէրին»...

Բողենշտեղտի «լիշողութիւնները» լիքն են ալդպիսի մանր հետաքրքրական պատմութիւններով: Բայց ուսանելի բաներ էլ շատ կան, որովհետեւ Բողենշտեղտը ոչ միայն լաւ պատմող է, ալ և մեծ զիտութեան տէր գիտնական է:

Ա. Ա.